

## Լ Ե Մ Ա Ն Ի Ա Փ Ի Ն

ՇՅ.ԷԷ. Վ.Ս.Բ.Յ.Ս.ՊԵՏԻՆ

Երկնքին բացուող մանկան մը արդար  
Նայուածքին նրման՝  
Կը ժպտիս անուշ լին կախարդագեղ,  
Շուրջդ դարասան, այգի ու պարտէզ,  
Մանեակ մը ինչպէս պարանոցիդ շուրջ,  
Գգուանումը զմրուխտ:

Եւ այգն ամէն օր ոսկերով սասափ,  
Մազերով ոսկի,  
Կ'անցնի ափերէդ,  
Մինչ վերջալոյսին, երկնքի խորէն  
Չուրերուդ կ'իյնան շարք առ շարք,  
Ոսկի ու լիլակ,  
Արծաթ ու մոխիր:

Յետոյ կը բացուին ափերուդ վրայ  
Կոհակներ հազար լոյսերու կախարդ,  
Մինչ չուրերուդ ծոց,  
Հայելի մթին,  
Կը կախուի երկինք, այգի մը ինչպէս  
Ողկոյզներով սաք:

Քաղաքն ու գիւղեր ամէն իրիկուն,  
Չուարք ու ծիծղուն,  
Լոյսերով առաս,  
Նրման նոր Տարուոյ ծառին ծաղկազարդ  
Կը բոլորեն քեզ,  
Կոյս հողանագեղ,  
Որ նայուածքներով կապոյտ ու քրքուն՝  
Քեզի կը կանչես հանոյքի ծառաւ  
Սիրերը մարդոց,  
Եւ նուագներու թեւերուն վրայ  
Յուզումնասրտի,  
Կը սանիս գանոնք անդունդներու մութ,  
Կասարներու լոյս,  
Գէպի հանոյքի ասղերն անորոշ:

Ո՞ն կը սրովէ սիրքը քաղաքին  
Լոյսով ու սիւմով,  
Նուագներու ձայն,  
Ինքնաշարժերու կռիւնքը կերկեր,  
Կը ձուլուին իրար,

Մինչ նաւասունէր երգով ու պարով,  
 Կը դիմաւորէն շոյանով հազար  
 Աղիններ փարքամ,  
 Իբրեւ հարսնցու  
 Շամբուօ գիւերուան:

Լին կապուսագեղ,  
 Երբեմն անդորր, երբեմն երերուն,  
 Լարէն առկախուած ժամանակներու  
 Կը լսես այսպէս,  
 Հազար սիրտերու տրոփն աղեկէզ  
 Բացուած ջուրերուդ,  
 Ծփուն ու բիւրեղ,  
 Իրիկուան հովի մրմունջներուն հետ,  
 Մինչ վրաց կուգայ  
 Բանալ իր շողեր,  
 Տրտում լուսնկան,  
 Նրման փեռնուած վարդերու ներմակ,  
 Քեզի պատմելու պատճառն իր ցաւին  
 Ու սժգունութեան:

ԵՂԻՎ Ա.ԲԳ

ԵՐԿՐՈՒ ԱՇՈՒՆ

- |  |  |
|--|--|
| <p>— Տրտում ես ինչո՞ւ. —<br/>                 Հարց տուին ծառին<br/>                 Հովերը աւանան.<br/>                 Եւ սարի լանջին՝<br/>                 Ծառն այդ առանձին<br/>                 Արտասուեց անձայն:</p> | <p>Օղապար, դեղին՝<br/>                 Տերեւներն անոր<br/>                 Մաներգ հիւսեցին:</p>  |
| <p>— Ես կը մտածեմ<br/>                 Իմ ցաւին վաղուան,<br/>                 Երբ ձմեռը գայ: —<br/>                 Շենջաց մեղմիւ<br/>                 Ծառն, ու գրկեցին<br/>                 ձիւղերը գիրար:</p>          | <p>— Մի սխրիր այդքան,<br/>                 Պիտի հարսնանաս<br/>                 Դուն կրկին՝ զարնան...<br/>                 Բայց վա՛յ, վայ Մարդուն,<br/>                 Զի ձմեռն անոր<br/>                 Զունի ալ զարուն: —</p> |
| <p>Եւ աւան հովին<br/>                 Համբոյրէն քախձոս,</p>  | <p>Մեղմ փսփսացին<br/>                 Հովերը աւանան,<br/>                 Ու անցան, գացին:</p>   |
|  | <p>Վ.Ա.Հ.Բ.Մ Մ.Ա.Վ.Ե.Ս.Ն</p>   |